

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈՂՎԱԾ 1. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 22-ի ՀՕ-129-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասում «արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց՝ այդ գործունեության մասով, ֆոնդային բորսաների և Կենտրոնական դեպոզիտարիայի» բառերը փոխարինել «գրավատների, վճարահաշվարկային կազմակերպությունների, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց՝ միայն այդ գործունեության մասով, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների (այդ գործունեության մասով)»:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության տարածքում անհատ ձեռնարկատերերի, նոտարների, փաստաբանական գործունեություն իրականացնողների (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) և կազմակերպությունների կողմից առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների բոլոր դեպքերում (ներառյալ կանխավճարները) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը պարտադիր է, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:»

2) 2-րդ մասում՝

ա. «դրամական հաշվարկներ կատարելիս կազմակերպությունների» բառերից հետո լրացնել «և անհատ ձեռնարկատերերի» բառերով.

բ. «դ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«դ) ավտոմոբիլային, ջրային, երկաթուղային, օդային տրանսպորտով կատարվող ուղևորափոխադրումների, բեռնափոխադրումների իրականացման և երթևեկության տոմսերի վաճառքի.».

գ. «ժ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ժ) վերգետնյա տրանսպորտային միջոցներով իրականացվող գյուղատնտեսական արտադրանքի, թերթերի, ամսագրերի, ինչպես նաև ցիստեռներից (տակառներից) լցնվի գարեջրի, կվասի, կաթի կամ թանի վաճառքի.».

դ. ուժը կորցրած ճանաչել «ժգ» կետը,

ե. լրացնել հետևյալ բովանդակությամբ «ժէ» ենթակետով.

«ժէ) խաղատների և (կամ) շահումով խաղերի կազմակերպման:»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) «Հսկիչ-դրամարկղային մեքենաներին» բառերից հետո լրացնել «, ցանցային կապի միջոցներին» բառերով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Հսկիչ-դրամարկղային մեքենան տեղադրվում է առևտրի օբյեկտի կամ ծառայության մատուցման վայրի այն մասում, որտեղ կատարվում է վճարումը»:

ՀՈԴՎԱԾ 4. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1 հոդվածով՝

«Հոդված 5.1. Նոտարական և փաստաբանական գործունեություն իրականացնողների կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման առանձնահատկությունները

1. Նոտարական և (կամ) փաստաբանական գործունեություն իրականացնող անձինք հսկիչ-դրամարկղային մեքենաներ չեն կիրառում բնակչության հետ իրականացվող անկանխիկ գործարքների մասով:

2. Այն դեպքում, երբ նոտարական և (կամ) փաստաբանական գործունեություն իրականացնող անձինք բնակչությանը ծառայություններ են մատուցում գործունեության (հսկիչ-դրամարկղային մեքենայի գտնվելու) վայրից դուրս, պարտավոր են գործունեության վայր վերադառնալով, անպահալ՝ ոչ ուշ քան երեք ժամվա ընթացքում, հսկիչ-դրամարկղային մեքենա մուտքագրել մատուցված ծառայության դիմաց վճարված գումարը, իսկ մեկ օրվա ընթացքում՝ հսկիչ-դրամարկղային մեքենայի կտրոնը տրամադրել կամ փոստով առաքել ծառայություն ստացողին:

3. Սույն օրենքի 11-րդ հոդվածով սահմանված գործունեության կասեցումը նոտարական և (կամ) փաստաբանական գործունեություն իրականացնողների նկատմամբ չի կիրառվում»:

ՀՈԴՎԱԾ 5. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1) «բ» կետում «կապարակնքված» բառը փոխարինել «դրոշմակնքված» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս.

«Առևտրի այն օբյեկտներում կամ ծառայության մատուցման այն վայրերում, որտեղ կազմակերպությունները կամ անհատ ձեռնարկատերերը իրականացնում են այնպիսի գործունեություն, որի համար կանխիկ դրամով իրականացվող դրամական հաշվարկների դեպքերում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառումը օրենքով պարտադիր չէ, տեղադրված և կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով արձանագրված շրջանառությունները համարվում են չհիմնավորված, և նման հսկիչ-դրամարկղային մեքենաները հարկային մարմնում գրանցումից հանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով»:

ՀՈԴՎԱԾ 6. Օրենքի 7-րդ հոդվածը լրացնել՝

1) հետևյալ բովանդակությամբ «դ» և «ե» կետերով.

«դ) ապահովել ցանցային կապի միջոցներով յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով (այդ թվում՝ արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային-բրոքերային առքուվաճառքի գործունեության մասով կիրառվող հսկիչ-դրամարկղային մեքենաներով, համակարգչային սարքավորումներով) օրվա ընթացքում իրականացրած դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին:

2012 թվականի հունվարի 1-ից կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը կարող են կանավոր հարկային մարմին ուղարկել հսկիչ-դրամարկղային մեքենաների կողմից օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը՝ ցանցային

կապի միջոցներով: Սույն պարբերությունում նշված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգումներ անցկացվում են միայն ստուգումների անցկացման ռիսկային չափանիշների հիման վրա՝ հարկ վճարողի գործունեությունը ռիսկային դիտարկելու դեպքերում:

Ցանցային կապի միջոցներով հսկիչ-դրամարկղային մեքենաների կողմից օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ուղարկումը հարկային մարմին պարտադիր է՝

- 2013 թվականի հունվարի 1-ից՝ ամսական ԱԱՀ վճարող համարվող հարկ վճարողների համար,
- 2014 թվականի հունվարի 1-ից՝ եռամսյակային ԱԱՀ վճարող համարվող հարկ վճարողների համար,

- 2015 թվականի հունվարի 1-ից՝ ԱԱՀ վճարող չհամարվող հարկ վճարողների համար, բացառությամբ ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված բնակավայրերում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի:

Ե) մինչև սույն հոդվածի «դ» կետով նախատեսված ժամկետները կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը յուրաքանչյուր ամսվա առաջին հինգ աշխատանքային օրվա ընթացքում իրենց հաշվառման հարկային մարմին են ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով:»:

2) հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«2011 թվականի մարտի 1-ից հետո օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստացած կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը պարտավոր են կիրառել պարտադիր տեխնիկական պահանջներին բավարարող և օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ ցանցային կապի միջոցներով տեղեկություն ուղարկող հսկիչ-դրամարկղային մեքենաներ:»:

ՀՈՂՎԱԾ 7. Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Սույն օրենքով նախատեսված հսկողության իրականացման նպատակով հարկային մարմինը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան իրականացնում է ստուգումներ և ուսումնասիրություններ, ընդ որում՝ ստուգումներ անցկացնելու հանձնարարագրի վավերապայմանների, դրանք ստուգվող սուբյեկտին ներկայացնելու պահանջների նկատմամբ կիրառվում են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Հավելված 2-ի դրույթները:»:

ՀՈՂՎԱԾ 8. Օրենքի 10-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«Սույն օրենքով սահմանված պատասխանատվության կիրառման համար հիմք է հանդիսանում նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտումը:»:

ՀՈԴՎԱԾ 9. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի երրորդ պարբերությունում «երկրորդ պարբերությունում» բառերը փոխարինել «առաջին պարբերությունում» բառերով.

2) 2-րդ մասի երրորդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ, 4-րդ և 5-րդ մասեր.

«3. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ համապատասխան ժամկետից հետո հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենա չկիրառելու կամ հսկիչ-դրամարկղային մեքենային միացվող համապատասխան սարք չտեղադրելու համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը նախազգուշացվում է:

Նախազգուշացումից հետո մեկ տարվա ընթացքում սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է հարյուր հիսուն հազար դրամի չափով:

Տուգանքը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում սույն մասի երկրորդ պարբերությունում նշված խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով, և համապատասխան օբյեկտի գործունեությունը կասեցվում է մինչև ցանցային կապուղիների միջոցով տեղեկության ուղարկումն իրականացնող մեքենայի կիրառումը կամ հսկիչ-դրամարկղային մեքենային միացվող համապատասխան սարքի տեղադրումը:

4. Սույն օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով սահմանված՝ համապատասխան ժամկետից հետո հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմին ուղարկելը չապահովելու (հսկիչ-դրամարկղային մեքենայի, ցանցային կապի միջոցի անխափան աշխատանքը չապահովելու) համար կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է հարյուր հիսուն հազար դրամի չափով, բացառությամբ կապի անբավարարության կամ բացակայության պատճառով տեղեկությունը չուղարկելու դեպքերի: Կապի անբավարար որակի կամ դրա բացակայության վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմինը՝ կապ տրամադրող կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ներկայացրած տվյալները տրամադրում է հարկային մարմին:

Տուգանքը նշանակելուց հետո մեկ տարվա ընթացքում սույն մասի առաջին պարբերությունում նշված խախտումը կրկնելու դեպքում կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը տուգանվում է երեք հարյուր հազար դրամի չափով:

5. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում հարկ վճարողի գործունեության կասեցումը կարող է փոխարինվել տուգանքի վճարմամբ: Գործունեության կասեցումը փոխարինվում է տուգանքով հարկ վճարողի գրավոր համապատասխան դիմումի և սույն մասով սահմանված չափով հաշվարկվող տուգանքի վճարումը հաստատող փաստաթղթի (անդորրագրի) ներկայացման դեպքում: Տուգանք վճարվում է կասեցումը չկիրառելու յուրաքանչյուր օրվա համար՝ տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտի կամ ծառայության մատուցման վայրի) տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաներով նախորդ ամսվա ընթացքում արձանագրված միջին օրական շրջանառության երկու տոկոսի չափով, բայց ոչ պակաս վաթսուն հազար դրամից: Կասեցման ընթացքում դիմում ներկայացնելու դեպքում սույն մասով սահմանված տուգանքը վճարվում է դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից մինչև կասեցման ավարտը յուրաքանչյուր օրվա համար:

Գործունեության կասեցման ժամկետի ընթացքում դիմում ներկայացնելու դեպքում կասեցումը դադարեցվում է դիմումը ներկայացնելու հաջորդող օրվանից:»:

ՀՈԴՎԱԾ 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 30-րդ օրը:

ԱՓՈՓԱԹԵՐԹ

<<ՀԱԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԱԺ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
ԱԺ պատգամավորներ Վ.Այվազյան Հ.Հակոբյան	Օրենքի նախագծի 8-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսել, որ կապի անբավարարության կամ բացակայության դեպքում դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը հարկային մարմին ուղարկելը չապահովելու համար տուգանքը չի կիրառվում, ինչպես նաև նախատեսել լիազոր մարմին, որը ՀՀ կառավարության սահմանած կարգով կապի անբավարար որակի կամ բացակայության մասին տեղեկատվություն կներկայացնի հարկային մարմին:	Ընդունվել է: Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը լրամշակվել է:
ԱԺ պատգամավոր Ա.Հովհաննիսյան	«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «բ» կետում «կապարակնքված» բառը փոխարինել «դրոշմակնքված» բառով: Համապատասխանեցնել Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվող ժամկետը՝ 2011 թվականին հունվարի 1-ը, հաշվի առնելով, որ նոր գրանցվող տնտեսավարող սուբյեկտները առնվազն մեկ ամիս առաջ իրազեկված լինեն կատարվող փոփոխությունների վերաբերյալ:	Ընդունվել է: Օրենքի նախագծի 4-րդ հոդվածը լրամշակվել է: Ընդունվել է: Օրենքի նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասում «հունվարի» բառը փոխարինվել է «մարտի» բառով:
ԱԺ պատգամավոր Դ.Հարությունյան	1. «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ մասում ավելացնել նոր պարբերություն, հետևյալ խմբագրությամբ՝ «Փաստաբանական գործունեություն իրականացնողների նկատմամբ առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով և այլ օրենքներով»: 2. Օրենքը լրացնել 5 ¹ հոդվածով, հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 5 ¹ Փաստաբանական գործունեություն իրականացնողների առանձնահատկությունները 1. Փաստաբանական գործունեություն իրականացնողները պարտավոր են հսկիչ-դրամարկղային մեքենաներ կիրառել միայն այն դեպքում, երբ իրականացնում են կանխիկ դրամի ընդունում: Անկանխիկ վճարումներով ծառայություններ մատուցելու դեպքում փաստաբանական գործունեություն իրականացնողներն իրավունք ունեն հսկիչ-դրամարկղային մեքենաներ չկիրառել (ծեռք չբերել): 2. Փաստաբանական գործունեություն իրականացնողները հսկիչ-դրամարկղային մեքենաները կարող են ներկայացնել գրանցման իրենց բնակության (իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու) վայրի հարկային մարմնին: Հարկային մարմինը չի կարող փաստաբանական գործունեություն իրականացնողից պահանջել ներկայացնել տարածքի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքը հաստատող փաստաթուղթ:	Ընդունվել է մասնակի: Օրենքի նախագծով նախատեսվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում լրացնել նոր 5.1 հոդված՝ «Նոտարական և փաստաբանական գործունեություն իրականացնողների կողմից հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման առանձնահատկությունները» վերնագրով:
	2. Փաստաբանական գործունեություն իրականացնողները հսկիչ-դրամարկղային մեքենաները կարող են ներկայացնել գրանցման իրենց բնակության (իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու) վայրի հարկային մարմնին: Հարկային մարմինը չի կարող փաստաբանական գործունեություն իրականացնողից պահանջել ներկայացնել տարածքի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքը հաստատող փաստաթուղթ:	Օրենքում նման դրույթ նախատեսելու անհրաժեշտություն չկա, քանի որ նշված հարցը կարգավորված է ՀՀ կառավարության 26.08.2004թ. N 1325-Ն որոշմամբ, որի համաձայն ՀԴՄ գրանցելու համար հարկային մարմին ներկայացվում է դիմում՝

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
	Փաստաբանական գործունեություն իրականացնողի գործունեության հասցեն բնական կամ գտնվելու վայրի հասցեից տարբերվելու դեպքում՝ փաստաբանական գործունեություն իրականացնողը պարտավոր է այդ մասին տասն օրյա ժամկետում գրավոր տեղեկացնել հարկային մարմնին:	նախատեսվող ՀՂՄ-ի գրանցման մասին և ՀՂՄ-ի անձնագիրը:
	3. Փաստաբանական գործունեություն իրականացնողի մոտ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման նկատմամբ հսկողությունը հարկային մարմինը կարող է իրականացնել միայն օրենքով սահմանված կարգով հսկիչ գնում կատարելու միջոցով:	Օրենքում նման դրույթ նախատեսելու անհրաժեշտություն չկա, քանի որ նշված նորմը արդեն իսկ սահմանված է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի «բ» կետով, որի համաձայն՝ «ստուգումն իրականացնող անձինք իրենց լիազորություններն իրականացնելիս իրավունք ունեն՝ պահանջել փաստաթղթեր, տվյալներ և այլ տեղեկություններ, բացատրություններ, տեղեկանքներ, որոնք անմիջականորեն առնչվում են իրենց իրավասության շրջանակներում իրականացվող ստուգման նպատակներին»:
	4. Հարկային մարմինը չի կարող փաստաբանական գործունեություն իրականացնողից պահանջել ներկայացնելու փաստաբանական ծառայությանը վերաբերող փաստաթղթեր (այդ թվում՝ ծառայություն մատուցելու մասին պայմանագիրը), բացառությամբ այն դեպքի, երբ հսկիչ գնում կատարող անձը տվել է իր գրավոր համաձայնությունը՝ միայն իր վճարմանը վերաբերող փաստաթղթեր տրամադրելու մասով:	Միաժամանակ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածով ամրագրված է, որ՝ «պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:
	5. Փաստաբանական գործունեություն իրականացնողը ցանցային կապի միջոցով հսկիչ-դրամարկղային մեքենայով օրվա ընթացքում իրականացրած դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ հարկային մարմնին տեղեկություն ուղարկելու պարտականություն չի կրում:	Օրենքում նման դրույթ նախատեսելու անհրաժեշտություն չկա, քանի որ ցանցային կապի միջոցով հսկիչ-դրամարկղային մեքենայով օրվա ընթացքում իրականացրած դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն ուղարկելու համար նշված անձանցից լրացուցիչ գործողություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում: Օրվա վերջում «Հ» հաշվ ետվության դուրս բերման ժամանակ, նշված տեղեկությունը առանց անձի միջամտության ուղարկվում է հարկային մարմին:
	6. Այն դեպքում, երբ փաստաբանական գործունեություն իրականացնող անձը,	Ընդունվել է: Օրենքի նախագիծը լրացվել է 4-

Առաջարկության, առարկության հեղինակը (առաջարկության, առարկության ստացման ամսաթիվը)	Առաջարկության, առարկության բովանդակությունը	Եզրակացություն
	գործի առանձնահատկությունից ելնելով, իր բնական (գտնվելու) կամ գործունեության վայրից դուրս այլ վայրում կանխիկ գումար է ստանում փաստաբանական ծառայության դիմաց, պարտավոր է հսկիչ-դրամարդկային մեքենայի գտնվելու վայր վերադառնալով, անհապաղ՝ ոչ ուշ քան երեք ժամվա ընթացքում, հսկիչ-դրամարդկային մեքենայի միջոցով կատարել համապատասխան գրառումը:	րդ հողվածով, որտեղ սահմանվել է նշված դրույթը:
	7. Սույն օրենքի 3-րդ գլխով նախատեսված պատասխանատվության միջոցներից՝ գործունեության կասեցումը, փաստաբանական գործունեություն իրականացնողների նկատմամբ չի կարող կիրառվել:»:	Ընդունվել է: Օրենքի նախագիծը լրացվել է 4-րդ հողվածով, որտեղ սահմանվել է նշված դրույթը: